

**«Պետական տուրքի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և
«Հայաստանի Հանրապետություն ցեմենտի
ներմուծման ժամանակավոր սահմանափակում
կիրառելու մասին» Հայաստանի Հանրապետության
կառավարության որոշման նախագծեր**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

2020 ԹՎԱԿԱՆԻ N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՑԵՄԵՆՏԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի «արտաքին առևտրի ոլորտում սահմանափակման ենթակա ապրանքներ» հասկացությունն ու 2.1-ին հոդվածը և համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» Պայմանագրի 47-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել, որ

1.1 ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ 2523210000 ապրանքային դիրքին դասվող ծածկագրի) ապրանքային դիրքի ծածկագրին դասվող ապրանքների «Բացթողնում ներքին սպառման համար», «Վերամշակում մաքսային տարածքում» և «Վերամշակում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծումն իրականացվում է լիցենզիների հիման վրա:

1.2 1.1-ին կետում նշված ապրանքների ներմուծման նպատակով լիցենզիան տրամադրվում է յուրաքանչյուր 100 տոննայի համար:

2. Լիցենզիաների տրամադրման համար լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը:

3. Սույն որոշման 1.1-ին կետում սահմանված ապրանքների ներմուծման լիցենզիայի տրամադրման համար պետական տուրքի գանձումն իրականացնել «Պետական տուրքի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19.6-րդ հոդվածը լրացնել հետևյալ պարբերությամբ նոր բովանդակությամբ.

«Արտաքին տնտեսական գործունեության
ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ)
դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի
(բացառությամբ 2523210000, 2523100000
ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի)
բազային տուրքի
1800-ապատիկի չափով
«Բացթողնում՝ ներքին սպառման համար»,
«Վերամշակում մաքսային տարածքում» և
«Վերամշակում ներքին սպառման համար»
մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր
հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա
տրամադրելու համար, իսկ

ԱՏԳ ԱԱ 252310000 ծածկագրին դասվող ցեմենտի
«Բացթողնում՝ ներքին սպառման համար»,
«Վերամշակում մաքսային տարածքում» և
բազային տուրքի
500-ապատիկի չափով
«Վերամշակում ներքին սպառման համար»
մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր
հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա
տրամադրելու համար

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից: